

Համարը N 253-Ն

Տիպը Հրաման

Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2007.01.15/2(242) Հոդ.17

Ընդունող մարմինը Քաղաքաշինության նախարար

Ստորագրող մարմինը Քաղաքաշինության նախարար

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 25.01.2007

Տեսակը Մայր

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 10.11.2006

Ստորագրման ամսաթիվը 10.11.2006

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱԿԱՎԱՇԱՐԺՈՒՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

*«Գրանցված է»*

ՀՀ արդարադատության

նախարարության կողմից

28 դեկտեմբերի 2006 թ.

Պետական գրանցման թիվ 11706438

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

10 նոյեմբերի 2006 թ.  
ք. Երևան

N 253-Ն

## Հ Ր Ա Մ Ա Ն

ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱԿԱՎԱՇԱՐԺՈՒՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10<sup>1</sup> հոդվածի և ՀՀ կառավարության 2003 թ. փետրվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը քաղաքաշինության բնագավառում կառավարման պետական լիազորված մարմնի իրավասություն վերապահելու մասին» N 156-Ն որոշման համաձայն.

*Հրամայում եմ՝*

Հաստատել ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաչափուն խմբերի համար» շինարարական նորմերը՝ համաձայն հավելվածի:

Նախարար՝

Ա. Հարությունյան

Հավելված

Հաստատված է

ՀՀ քաղաքաշինության նախարարի  
2006 թ. նոյեմբերի 10-ի  
N 253-Ն հրամանով

Գործարկման թվականը \_\_\_\_\_

## 1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՈՐՏԸ

1.1 Սույն փաստաթղթի պահանջները տարածվում են բնակչության սակավաշարժուն խմբերի (այսուհետև՝ ԲՍԽ) համար մատչելի շենքերի և շինությունների ֆունկցիոնալ-հատակագծային տարրերի, դրանց տեղամասերի, մուտքային հանգույցների, հաղորդակցությունների, տարահանման ուղիների, բնակության, սպասարկման և աշխատատեղերի սենքերի (գոտիների), ինչպես նաև դրանց տեղեկատվական և ինժեներական սարքավորվածության վրա:

1.2 Սույն նորմերի պահանջները չեն տարածվում հաշմանդամների և ավագ տարիքային խմբերի մարդկանց խնամակալության պայմանով, մշտական և ժամանակավոր բնակության համար նախատեսված մասնագիտացված կազմակերպությունների, բնակչության տվյալ կարգի սպասարկման և մշտական կացության համար նախատեսված բուժկազմակերպությունների ստացիոնարների և նմանատիպ կազմակերպությունների, ինչպես նաև մեկ ընտանիքի համար նախատեսված բնակելի տների վրա:

## 2. ՆՈՐՄԱՏԻՎ ՀՂՈՒՄՆԵՐ

Սույն նորմերում վկայակոչված են հետևյալ փաստաթղթերը.

ՀՀՇՆ II-8.03-96 (ՄՍՆ 2.04-055-95) «Բնական և արհեստական լուսավորություն»

ՀՀՇՆ II-8.04.01-97 (ՄՍՆ 2.02.01-97) «Շենքերի և կառուցվածքների հրդեհային անվտանգություն»

ՀՀՇՆ IV-12.02.01-2004 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում»

ՄՆԻՊ 2.08.01-89 «Բնակելի շենքեր»

ՄՆԻՊ 2.08.02-89 «Հասարակական շենքեր և կառուցվածքներ», բաժին 4 «Սակավաշարժուն հաճախորդների մատչելիությանը ներկայացվող պահանջներ»

ՀՀՇՆ IV-11.03.01-04 «Արտադրական շենքեր»

ՄՆԻՊ 2.09.04-87 «Ադմինիստրատիվ և կենցաղային շենքեր»

## 3. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Տվյալ փաստաթղթում կիրառվող տերմինների սահմանումները բերված են Ա Հավելվածում:

## 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Հասարակական, բնակելի և արտադրական շենքերի նախագծման և վերակառուցման դեպքում, հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար հարկավոր է նախատեսել բնակչության մնացած խմբերին համահավասար կենսագործունեության պայմաններ:

4.2 Հաշմանդամների և բնակչության այլ սակավաշարժուն խմբերին /ԲՍԽ/ մատչելի օբյեկտների ցանկը, հաշմանդամների հաշվարկային թվաքանակը և կարգը, ինչպես նաև ԲՍԽ-երի շարժունակության խումբը (Հավելված Գ, աղյուսակ Գ1) սահմանվում են նախագծման և ճարտարապետահատակագծային առաջադրանքով:

4.3 Պատմական, զեղարվեստական կամ ճարտարապետական արժեք ներկայացնող շենքերի ԲՍԽ-երի պահանջներին հարմարեցնելու անհրաժեշտությունը և աստիճանը (ձևերը) հարկավոր է համաձայնեցնել պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման և օգտագործման համապատասխան մարմնի հետ:

4.4 ԲՍԽ-երին մատչելի օբյեկտների նախագծման դեպքում անհրաժեշտ է ապահովել.

ա) նպատակային հաճախման վայրերի հասանելիությունը և շենքի կամ կառույցի ներսում տեղափոխման անարգելիությունը,

բ) շարժման ուղիների (այդ թվում տարահանման), ինչպես նաև բնակվելու, սպասարկման և աշխատատեղերի անվտանգությունը,

գ) ԲՍԽ-երին տարածության մեջ կողմնորոշվելու, սարքավորումներից (այդ թվում նաև ինքնասպասարկման), ծառայություններից օգտվելու, աշխատանքային և ուսումնական գործընթացներին մասնակցելու հնարավորությունը ընձեռող լիարժեք և որակյալ տեղեկատվության ժամանակին տրամադրումը,

դ) կենսագործունեության միջավայրի հարմարությունը և հարմարավետությունը (կոմֆորտը):

4.5 Հաշմանդամների համար մատչելի օբյեկտների նախագծային լուծումները չպետք է սահմանափակեն բնակչության այլ խմբերի կենսագործունեության պայմանները, ինչպես նաև շենքերի շահագործման արդյունավետությունը:

Այդ նպատակով առաջարկվում է բնակչության բոլոր խմբերի կողմից օգտագործվող շենքերը և

շինությունները նախագծել հաշմանդամների պահանջներին հարմարեցվող ունիվերսալ տարրերով: Հաշմանդամների սպեցիֆիկ պահանջները հաշվի առնող մասնագիտացված տարրերի կիրառման անհրաժեշտությունը սահմանվում է նախագծման առաջադրանքով:

4.6 ԲՍԽ-երի համար մատչելի շենքերի և շինությունների նախագծումը, սարքավորումը և կահավորումն անհրաժեշտ է կատարել գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջների համաձայն:

## 5. ՇԵՆՔԵՐԻՆ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀՈՂԱՍԱՍԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

### 5.1 Հողամասեր և տարածքներ

5.1.1 Նախագծերում պետք է նախատեսված լինեն ԲՍԽ-երի անարգելք և հարմար տեղաշարժման պայմաններ, շենքին մոտեցման հողամասով կամ կազմակերպության շինությունների համալիրների տարածքով, հաշվի առնելով քաղաքաշինական նորմերի պահանջները: ԲՍԽ-երի համար մատչելի շարժման բոլոր ուղիներում պետք է ապահովված լինի տեղեկատվական աջակցության միջոցների համակարգ:

5.1.2 Հաշմանդամների կողմից հաճախվող օբյեկտներ տանող ճանապարհին տրանսպորտային անցուղիները և հետիոտն ճանապարհները թույլատրվում է համատեղել՝ երթևեկության ուղիների հարաչափերին ներկայացվող քաղաքաշինական պահանջները պահպանելու պայմանով:

5.1.3 Հաշմանդամների թիկնաթոռ-սայլակներով հանդիպակաց շարժման դեպքում, երթևեկության ուղու լայնությունը պետք է լինի ոչ պակաս 1,8 մ, հաշվի առնելով թիկնաթոռ-սայլակների եզրաչափերը՝ գործող նորմատիվ փաստաթղթերի համաձայն: Հաշմանդամների թիկնաթոռ-սայլակներով երթևեկության ուղու երկայնական թեքությունը չպետք է գերազանցի 5%: Շենքի մոտ և սովերապատ տեղերում մայթից իջատեղեր սարքելու դեպքում, թույլատրվում է ուղու երկայնական թեքությունը մեծացնել մինչև 10%՝ 10 մ-ից ոչ ավելի տարածության վրա: Երթևեկության ուղու լայնական թեքությունը պետք է ընդունել 1-2 %-ի սահմաններում:

5.1.4 Հետիոտն ուղիների եզրաքարերի բարձրությունը թույլատրվում է ընդունել 0,05 մ-ից ոչ պակաս: Մայթերի երթևեկելի մասի հետ հատման տեղերում կողաքարի բարձրությունը, ինչպես նաև հետիոտն երթևեկության ուղիներին հարակից եզրաքարերի բարձրությունների, շահագործվող սիզամարգերի և կանաչապատված հարթակների երկայնությամբ տեղադրված կողաքարերի բարձրությունների անկման չափը չպետք է գերազանցի 0,04 մ:

5.1.5 Տեղամասում ստորգետնյա և վերգետնյա անցումների առկայության դեպքում, դրանք անհրաժեշտ է սարքավորել թեքահարթակներով կամ վերամբարձ սարքվածքներով, եթե ԲՍԽ-երի համար հնարավոր չէ կազմակերպել գետներես անցում:

5.1.6 Հետիոտնային ուղիների ծածկույթի վրա նախագծուչական ֆունկցիա կատարող շոշափողական (տակտիլ) միջոցները պետք է տեղադրել տեղեկատվության օբյեկտից՝ վտանգավոր հատվածի սկզբից, շարժման ուղղության փոփոխումից, մուտքից և այլն, ոչ պակաս 0,8 մ հեռավորության վրա:

5.1.7 Հետիոտնի ճանապարհների, մայթերի և թեքահարթակների համար որպես ծածկույթ չի թույլատրվում լցովի կամ խոշորկառուցվածքային նյութերի օգտագործումը, ինչը կխոչընդոտի ԲՍԽ-երի թիկնաթոռ-սայլակներով կամ հենակներով տեղաշարժվելուն: Բետոնե սալերից ծածկույթները պետք է լինեն հարթ, իսկ նրանց միջև կարանների լայնությունը՝ 0,015 մ-ից ոչ ավելի:

5.1.8 ԲՍԽ-երի շարժման ուղիների վրա չպետք է տեղադրվեն կախովի ծխնիներով երկկողմանի գործող անթափանցիկ դռնակներ, պտտվող փեղկերով դռնակներ, ինչպես նաև տուրնիկետներ:

5.1.9 Ռելիեֆի անկման տեղերում բաց սանդուղքների համար սանդղամատի լայնությունը ընդունվում է 0,4 մ-ից ոչ պակաս, աստիճանների բարձրությունը՝ ոչ ավելի 0,12 մ-ից: Արտաքին սանդուղքների բոլոր աստիճանները մեկ սանդղաբազկի սահմաններում պետք է լինեն միանման ըստ հատակագծի ձևի, սանդղամատի լայնության և աստիճանների բարձրության չափսերի: Արտաքին աստիճանների լայնական թեքությունը պետք է լինի 1-2 %-ի սահմաններում:

Սանդուղքները պետք է կրկնակվեն թեքահարթակներով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև բարձրանալու այլ միջոցներով:

5.1.10 Շենքերի, շինությունների պատերին կամ առանձին կոնստրուկցիաների վրա տեղադրվող սարքավորանքները և սարքվածքները (փոստարկղերը, տաքսոֆոնների պատասպարանները, տեղեկատվական վահանները և այլն), ինչպես նաև շենքերի և շինությունների ելուստային մասերը և տարրերը չպետք է կրճատեն անցման, ինչպես նաև թիկնաթոռ-սայլակի մանևրման և տեղաշարժման նորմավորվող տարածությունը:

Օբյեկտները, որոնց ստորին եզրաշերտը հետիոտնային ճանապարհի մակարդակից գտնվում է 0,7 մինչև 2,1 մ բարձրության վրա, չպետք է դուրս ելնեն ուղղաձիգ կոնստրուկցիայի հարթությունից 0,1 մ-ից ավելի, իսկ դրանց առանձին կանգնած հենարանի վրա տեղադրման դեպքում՝ 0,3 մ-ից ավելի: Ելուստային չափսերի մեծացման դեպքում, այդ օբյեկտների տակի տարածությունը անհրաժեշտ է անջատել 0,05 մ-ից ոչ պակաս բարձրությամբ եզրաքարերով, կամ 0,7մ-ից ոչ պակաս բարձրությամբ ցանկապատով:

Տեսողական թերություններով մարդկանց համար նախատեսված տաքսոֆոնները և այլ հատուկ սարքավորումները պետք է տեղակայվեն հորիզոնական հարթության վրա ակոսավոր ծածկով կամ 0,4 մ ոչ պակաս բարձրությամբ առանձին սալերի վրա, որոնց եզրը պետք է գտնվի տեղադրված սարքավորանքից 0,7-0,8 մ հեռավորության վրա: Կախովի սարքավորանքի ձևերը և եզրերը պետք է լինեն կլորացված:

5.1.11 Մուտքը տարածք կամ տեղամաս հարկավոր է սարքավորել օբյեկտի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

Մեկբնակարանային բնակելի տան հողամասի մուտքը պետք է սարքավորել թերի տեսողությամբ և լսողության արատներով մարդկանց համար տեղեկություններ փոխանցող հսկիչ-պաշտպանական սարքերով և ազդանշանման սարքվածքներով:

5.1.12 Սպասարկման կազմակերպությունների մոտ բաց անհատական ավտոկայանատեղերում հաշմանդամների ավտոտրանսպորտի համար հարկավոր է հատկացնել 10%-ից ոչ պակաս (առնվազն մեկ) տեղ: Այդ տեղերը պետք է նշանակվեն միջազգային պրակտիկայում ընդունված նշաններով:

Հաշմանդամի անձնական ավտոտրանսպորտի համար հատկացված տեղերը պետք է լինեն հաշմանդամի համար մատչելի՝ մուտքի մոտ, բայց ոչ հեռու 50 մ-ից, իսկ բնակելի շենքերի մոտ՝ ոչ հեռու 100 մ-ից:

Հաշմանդամների ավտոմեքենաների կանգառման գոտու լայնությունը պետք է լինի 3,5 մ-ից ոչ պակաս:

Միայն հաշմանդամներ փոխադրող հասարակական տրանսպորտի հատուկ միջոցների կանգառման հարթակները պետք է նախատեսել ԲՄՆ-երին մատչելի հասարակական շենքերի մուտքերից ոչ հեռու 100 մ-ից:

## 5.2 Մուտքեր և երթևեկության ուղիներ

5.2.1 Շենքում պետք է լինի ԲՄՆ-երի համար հարմարեցված առնվազն մեկ մուտք հողի մակերևույթից և ԲՄՆ-երին մատչելի այդ շենքի հետ միացված յուրաքանչյուր ստորգետնյա կամ վերգետնյա անցումից:

5.2.2 Արտաքին սանդուղքները և թեքահարթակները պետք է ունենան բռնածողեր՝ գործող նորմատիվային փաստաթղթերում հենարանային ստացիոնար սարքավորումներին ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխան:

Շենքի հիմնական մոտեցումներում սանդուղքների 2,5 մ և ավելի լայնության դեպքում, լրացուցիչ հարկավոր է նախատեսել բաժանիչ բռնածողեր:

ԲՄՆ-երին մատչելի մուտքերի հարթակը պետք է ունենա շվաքարան, ջրահեռացում, կախված տեղական կլիմայական պայմաններից նաև ջեռուցում, ինչը սահմանվում է նախագծման առաջադրանքով:

Մուտքային հարթակների և նախամուտքերի ծածկերի մակերեսները պետք է լինեն պինդ, թրջվելու դեպքում չպետք է սահեն և պետք է ունենան լայնական թեքություն 1-2 %-ի սահմաններում:

5.2.3 Նախամուտքերի և նախամուտք-անցախուցերի խորությունը պետք է լինի ոչ պակաս 1,8 մ, իսկ բնակելի շենքերում 1,5 մ-ից ոչ պակաս՝ 2,2 մ-ից ոչ պակաս լայնության դեպքում:

Անցախուցերի կամ մուտքային հարթակների հատակում տեղադրված դրենաժային և ջրահավաք ցանցերը պետք է տեղադրվեն համահարթ հատակի ծածկի մակերեսի նկատմամբ: Դրանց անցքերի լուսանցքերի լայնությունը չպետք է գերազանցի 0,015 մ: Երադասելի է շեղանկյունաձև կամ քառակուսի անցքերով ցանցերի կիրառումը:

5.2.4 Մուտքում հսկման առկայության դեպքում հարկավոր է նախատեսել հսկող սարքեր, հարմարեցված հաշմանդամների այն կարգերին, որոնց համար նախագծվող օբյեկտը պետք է մատչելի լինի:

5.2.5 Սենքերը, որտեղ կարող են գտնվել թիկնաթոռ-սայլակով հաշմանդամները, հարկավոր է տեղադրել հողի մակերևույթին ամենամոտ մուտքի մակարդակի վրա: Սենքերի այլ տեղադրման դեպքում, շենքի բարձրությամբ բացի սանդուղքներից, հարկավոր է նախատեսել նաև թեքահարթակներ, ամբարձիչ հենահարթակներ, վերելակներ կամ հաշմանդամների տեղափոխման այլ հարմարանքներ:

5.2.6 Շենքի ներսում ԲՄՆ-երի տեղաշարժման ուղիները հարկավոր է նախագծել շենքից մարդկանց տարահանման ուղիներին ներկայացվող նորմատիվային պահանջներին համապատասխան:

Միջանցքներում, սենքերում, սրահներում երթևեկության ուղու բացարձակ լայնությունը պետք է լինի ոչ պակաս.

- թիկնաթոռ-սայլակի շարժման դեպքում մի ուղղությամբ .....1,5 մ,
- հանդիպակաց շարժման դեպքում .....1,8 մ:

Սարքավորանքով և կահույքով սենքում անցման լայնությունը պետք է ընդունել 1,2 մ ոչ պակաս:

Պատշգամբների և խորշապատշգամբների լայնությունը պետք է լինի առլույս 1,4 մ ոչ պակաս:

Այլ շենք տանող միջանցքի կամ անցումի լայնությունը պետք է ընդունել 2,0 մ ոչ պակաս:

Մոտեցումները տարբեր սարքավորանքներին և կահույքին պետք է լինեն 0,9 մ ոչ պակաս, իսկ թիկնաթոռ-սայլակի 90° շրջվելու անհրաժեշտության դեպքում՝ 1,2 մ ոչ պակաս:

5.2.7 Հաշմանդամի թիկնաթոռ-սայլակով 90-180° ինքնուրույն շրջադարձի գոտու տրամագիծը պետք է ընդունել ոչ պակաս 1,4 մ:

Սեղանների, վաճառասեղանների և այլ սպասարկման տեղերի, պատի սարքերի, ապարատների և սարքավորումների մոտ հաշմանդամների համար պետք է նախատեսել ազատ տարածություն հատակագծում 0,9x1,5 մ ոչ պակաս չափերով:

Թիկնաթոռ-սայլակի մանևրելու համար տարածության խորությունը դռան առջև՝ դուռը «դեպի դուրս» բացվելու դեպքում, պետք է լինի ոչ պակաս 1,2 մ, իսկ «դեպի ներս» բացվելու դեպքում՝ 1,5 մ ոչ պակաս՝ 1,5 մ ոչ պակաս լայնության դեպքում:

5.2.8 Շենքի ներսում տեղադրվող կոնստրուկտիվ տարրերը և պատերի ու այլ ուղղաձիգ մակերևույթների վրա երթևեկության եզրաչափային ուղիներում տեղադրվող սարքերը պետք է ունենան կլորացված եզրեր, ընդ որում,

դրանք հատակի մակարդակից 0,7 մ մինչև 2,0 մ բարձրության վրա չպետք է դուրս ցցվեն 0,1 մ-ից ավելի: Առանձին կանգնած հենարանով սարքերի, ցուցանակների տեղակայման դեպքում, դրանք չպետք է դուրս ցցվեն 0,3 մ-ից ավելի:

Բաց սանդուղքի սանդղաբազուկի և շենքի ներսում այլ կախված տարրերի տակ, որոնց չափերը ըստ բարձրության առկայա 1,9 մ-ից պակաս են, հարկավոր է տեղադրել արգելապատեր, ցանկապատեր և այլն:

5.2.9 Երթևեկության ուղիներում դռների բացվածքներից և սանդուղքներից ու թեքահարթակներից առաջ հատակի հատվածները 0,6 մ հեռավորության վրա, ինչպես նաև հաղորդաուղիների շրջադարձումից առաջ պետք է ունենան նախազգուշացնող ակոսավոր և (կամ) հակադրական գույներով ներկված մակերևույթ: Թույլատրվում է նախատեսել լուսային փարոսիկներ:

5.2.10 ԲՍՄ-երին մատչելի սենքերում չի թույլատրվում օգտագործել 0,013 մ ավելի բարձրությամբ ծածկով (խավի բարձրության հաշվառումով) խավավոր գորգեր:

Գորգային ծածկերը երթևեկության ուղիներում պետք է կիպ ամրակցված լինեն, հատկապես պաստառների ծայրակցվածքներում և տարատեսակ ծածկերի սահմանի երկայնքով:

5.2.11 Պատերում դռների և բացվածքների, ինչպես նաև սենքերից ու միջանցքից սանդղավանդակ տանող ելքերի լայնությունը չպետք է լինի 0,9 մ-ից պակաս: Բացվածքի շեփի խորության 1,0 մ-ից ավելի դեպքում, բացվածքի լայնությունը պետք է ընդունել ըստ հաղորդակցուղի անցումի լայնության, բայց ոչ պակաս 1,2 մ-ից:

Դռների բացվածքները չպետք է ունենան շեմ և հատակի բարձրությունների անկում: Շեմեր սարքելու անհրաժեշտության դեպքում, դրանց բարձրությունը կամ բարձրությունների անկումը չպետք է գերազանցի 0.025 մ:

5.2.12 Հաշմանդամներին մատչելի արտաքին դռների փեղկերում հարկավոր է նախատեսել թափանցիկ և հարվածադիմացկուն նյութով լցված դիտարկային պանելներ, որոնց ստորին մասը պետք է գտնվի հատակի մակարդակից 0,3-0,9 մ սահմաններում: Դռների փեղկերի ստորին մասերը հատակի մակարդակից 0,3 մ ոչ պակաս բարձրությամբ պետք է պաշտպանված լինեն հակահարվածային շերտով:

5.2.13 Թափանցիկ դռները և ցանկապատերը հարկավոր է իրագործել հարվածադիմացկուն նյութից: Դռների թափանցիկ փեղկերի վրա հարկավոր է նախատեսել վառ հակադրական գույներով 0.1մ ոչ պակաս բարձրությամբ և 0,2 մ ոչ պակաս լայնությամբ մակնշում, տեղադրված հետիոտնային ուղու մակերևույթից 1,2 մ ոչ ցածր և 1,5 մ ոչ բարձր մակարդակի վրա:

5.2.14 ԲՍՄ-երի երթևեկության ուղիներում չի թույլատրվում պտտվող դռների և տուրնիկետների տեղադրում: ԲՍՄ-երի երթևեկության ուղիներում պետք է օգտագործել միակողմանի գործողությամբ ծխնիներով դռներ՝ «բաց» և «փակ» դիրքերի ամրապնդիչներով: Հարկավոր է նաև օգտագործել դռներ, որոնք ապահովում են 5 վրկ-ից ոչ պակաս տևողությամբ դռների ավտոմատ փակման կասեցումը:

### 5.3 Սանդուղքներ և թեքահարթակներ

5.3.1 ԲՍՄ-երին մատչելի սանդղաբազուկների լայնությունը պետք է լինի 1,35 մ-ից ոչ պակաս: Սանդղաբազուկների 2,5 մ և ավելի հաշվարկային լայնության դեպքում հարկավոր է նախատեսել լրացուցիչ բաժանիչ բռնածողեր:

Սանդղաբազուկի սահմաններում գտնվող բոլոր աստիճանները ըստ սանդղամատի լայնության ու աստիճանի վերելքի բարձրության պետք է լինեն մինևույն երկրաչափության և չափերի: Թույլատրվում է փոխել բաց սանդուղքների առաջին սանդղաբազուկի ներքևի աստիճանների սանդղամատի ուրվանկարը (նախշանկարը):

5.3.2 Սանդուղքների սանդղամատի լայնությունը, բացառությամբ ներբնակարանային սանդուղքների, պետք է լինի ոչ պակաս 0,3 մ, իսկ աստիճանների վերելքի բարձրությունը՝ 0,15 մ ոչ ավելի: Սանդուղքների թեքությունները պետք է լինեն ոչ ավելի 1:2:

Հաշմանդամների և բնակչության այլ սակավաշարժուն խմբերի երթևեկության ուղիներում սանդուղքների աստիճանները պետք է լինեն հոծ, հարթ, առանց ելուստների և խորդուբորդ մակերևույթով: Աստիճանի կողը պետք է ունենա 0,05 մ ոչ ավելի շառավղով կլորացում: Պատերին չհարվող աստիճանների կողերը պետք է ունենան 0,02 մ ոչ պակաս բարձրությամբ կողիկներ:

5.3.3 Թեքահարթակի մեկ վերելքի (բազուկի) առավելագույն բարձրությունը նրա 8%-ից ոչ ավելի թեքության դեպքում չպետք է գերազանցի 0,8 մ: Երթևեկության ուղիներում հատակների բարձրությունների 0,2 մ և պակաս անկման դեպքում, թույլատրվում է թեքահարթակի թեքությունը ավելացնել մինչև 10%: Բացառիկ դեպքերում թույլատրվում է նախատեսել պտուտակային թեքահարթակներ:

Միակողմանի երթևեկությամբ թեքահարթակի լայնությունը պետք է լինի 1,0 մ ոչ պակաս, իսկ մնացած դեպքերում այն ընդունվում է ըստ երթևեկության գոտու լայնության, համաձայն 3.18 կետի:

Թեքահարթակի հորիզոնական հատվածի մասը ուղիղ գծով երթևեկության դեպքում կամ ոլորանի վրա պետք է լինի 1,5 մ ոչ պակաս խորությամբ:

5.3.4 Թեքահարթակների կող կոնստրուկցիաները պետք է իրականացվեն R60 ոչ պակաս հրակայունության սահմանով չայրվող նյութերից, իսկ թեքահարթակների սենքերի պատող կոնստրուկցիաները՝ R120 ոչ պակաս հրակայունությամբ նյութերից:

5.3.5 Թեքահարթակների բազուկների երկայնական եզրերով, ինչպես նաև հորիզոնական մակերևույթների եզրաշերտի բարձրությունների 0,45 մ ավելի անկման դեպքում, հարկավոր է նախատեսել 0,05 մ ոչ պակաս

բարձրությամբ կողիկներ, ոտքի կամ ձեռնափայտի սահունը կանխելու համար:

5.3.6 Բոլոր սանդուղքների և թեքահարթակների երկու կողմերի երկայնքով, ինչպես նաև բարձրությունների 0,45 մ ավելի անկման դեպքում, անհրաժեշտ է տեղադրել բռնածողերով պատնեշներ: Թեքահարթակների բռնածողերը հարկավոր է տեղադրել 0,7 և 0,9 մ բարձրության վրա, սանդուղքների մոտ - 0,9 մ բարձրության վրա, իսկ նախադարոցական հիմնարկներում նաև 0,5 մ բարձրության վրա:

Բազրիքների բռնածողերը սանդուղքի ներքին կողմից պետք է լինեն չընդհատվող ամբողջ բարձրությամբ: Բռնածողերի ավարտվող մասերը պետք է լինեն սանդղաբազուկից կամ թեքահարթակի թեք մասից 0,3 մ երկար:

5.3.7 Բազրիքների բռնածողերի վերին կամ բազուկի նկատմամբ արտաքին կողային մակերևույթի վրա պետք է նախատեսվեն հարկերի ռելիեֆային նշանակումներ: Թվերի չափերը պետք է լինեն ոչ պակաս, մ` լայնությունը - 0,01, բարձրությունը - 0,015, թվանշանի ռելիեֆի բարձրությունը` 0,002 մ ոչ պակաս:

## 5.4 Վերելակներ և ամբարձիչներ

5.4.1 Թիկնաթռ-սայլակով հաշմանդամների կողմից հաճախվող այն սենյերը, որոնք գտնվում են շենքի հիմնական մուտքի առաջին հարկից վերև կամ ներքև, հարկավոր է սարքավորել ուղետար վերելակներով կամ ամբարձիչ հենահարթակներով: Հաշմանդամների բարձրանալու միջոցի ընտրությունը և այդ միջոցների կրկնակման հնարավորությունը սահմանվում է նախագծման առաջադրանքով:

5.4.2 Թիկնաթռ-սայլակով հաշմանդամների համար նախատեսված վերելակի խցիկի ներքին չափերը պետք է լինեն ոչ պակաս` լայնությունը 1,1 մ-ից, խորությունը - 1,4 մ-ից: Նոր կառուցվող հասարակական և արտադրական շենքերում վերելակների դռան բացվածքի լայնությունը պետք է լինի 0,9 մ-ից ոչ պակաս: Մնացած բոլոր դեպքերում դռան բացվածքի չափերը սահմանվում են նախագծման առաջադրանքով` ըստ գործող նորմատիվ փաստաթղթերի:

5.4.3 Նկուղային կամ ցուղային հարկում հաշմանդամների համար վերելակի դռան առաջ պետք է նախատեսել նախամուտք-անցախուց:

5.4.4 Գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխանող տեղեկատվական լուսային և հնչունային ազդանշանումը պետք է նախատեսված լինի թիկնաթռ-սայլակով հաշմանդամների համար յուրաքանչյուր վերելակի դռան մոտ:

5.4.5 Վերելակների թվաքանակը սահմանվում է համաձայն Բ Հավելվածի:

Հարկավոր է կիրառել վերելակներ, որոնք սարքավորված են գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխանող կառավարման համակարգերով և հակաձխային պաշտպանությամբ:

5.4.6 Ամբարձիչ հենահարթակների սարքավորումը հենաշարժային ապարատի խախտմամբ հաշմանդամների` այդ թվում` թիկնաթռ-սայլակներով հաշմանդամների համար հարկավոր է նախատեսել գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Ամբարձիչից ելքերը հարկավոր է նախատեսել այն հարկերի մակարդակներում, որտեղ կան հաշմանդամների բնակման կամ նրանց նպատակային հաճախման համար նախատեսված սենյեր:

## 5.5 Տարահանման ուղիներ

5.5.1 Շենքերի ու շինությունների նախագծային լուծումները պետք է ապահովեն ԲՄՍ-երի անվտանգությունը ՀՀՇՆ-8.04.01 պահանջներին համապատասխան, հաշվի առնելով հաշմանդամների տարբեր կարգերի շարժունակությունը (Գ հավելված), նրանց թվաքանակը և գտնվելու վայրը (աշխատանքի, սպասարկման, հանգստի) շենքերում կամ շինություններում:

5.5.2 ԲՄՍ-երի սպասարկման և մշտապես գտնվելու վայրերը պետք է տեղաբաշխվեն սենյերից, հարկերից և շենքից տարահանման ելքերից հնարավորին նվազագույն հեռավորության վրա: Ընդ որում, հաշմանդամի գտնվելու սենյի փակուղի միջանցք ելնող դռան հեռավորությունը մինչև հարկից տարահանման ելքը չպետք է գերազանցի 15 մ:

Հաշմանդամների տեղերը հանդիսադահլիճներում պետք է տեղադրված լինեն ինքնուրույն տարահանման ուղի դուրս եկող առանձին շարքերում` հանդիսատեսների մնացած մասի տարահանման ուղիների հետ չհատվող:

Սպորտային կառույցների և մարզահանդիսային շենքերի տրիբունաներում հենաշարժական ապարատի վնասվածքով հանդիսատեսների նստատեղերը հարկավոր է նախատեսել անմիջապես տրիբունայի ելքի հարակից գոտում:

Հասարակական սննդի օբյեկտների դահլիճներում հաշմանդամների նստատեղերը (սեղանները) հարկավոր է տեղադրել տարահանման ելքին մոտ, բայց ոչ միջանցիկ գոտում:

5.5.3 ԲՄՍ-երի կողմից օգտագործվող տարահանման ուղիների լայնությունը (առույս) պետք է լինի ոչ պակաս, մ.

15 մարդուց ոչ ավելի տարողությամբ սենյերի դռների .....0,9  
բացվածքների և դռների մնացած դեպքերում, սենյերի ներսում անցումների .....1,2  
միջանցիկ պատշգամբների և խորշապատշգամբների .....1,5  
տարահանման համար օգտագործվող միջանցքների, թեքահարթակների .....1,8:

5.5.4 Չի թույլատրվում նախատեսել տարահանման ուղիներ արտաքին բաց մետաղական սանդուղքներով: Վերակառուցվող շենքում կամ շինությունում վերին հարկերից տարահանման ուղի հանդիսացող թեքահարթակը պետք է անմիջապես կապված լինի դեպի դուրս տանող ելքի հետ՝ նախամուտքի միջոցով:

5.5.5 Տարահանման ուղիների կոնստրուկցիաները պետք է լինեն ԿՕ դասի (հրդեհաանվտանգ), դրանց հրդեհակայունության սահմանը պետք է համապատասխանի ՀՀՇՆ II-8.04.01 4-րդ աղյուսակի, իսկ նրանց հարդարման և հատակի ծածկույթի նյութերը՝ նշված ՀՀՇՆ II-8.04.01-ի 6.25՝ կետի պահանջներին:

5.5.6 Այն դեպքում, երբ նախագծով հնարավոր չէ ապահովել ԲՍԽ-երի տարահանումը անհրաժեշտ ժամանակահատվածում, ապա նրանց փրկելու համար տարահանման ուղիներում հարկավոր է նախատեսել հրդեհաանվտանգ գոտի, որտեղից նրանք կարող են տարահանվել ավելի երկար ժամանակահատվածում կամ գտնվել այնտեղ մինչև հատուկ փրկարար ստորաբաժանումների գալը:

Սահմանային թույլատրելի հեռավորությունը սենքի առավել հեռու կետից մինչև հրդեհաանվտանգ գոտի տանող դուռը պետք է լինի տարահանման համար անհրաժեշտ ժամանակահատվածում հասանելիության սահմաններում:

5.5.7 Հրդեհաանվտանգ գոտու մակերեսը հարկում մնացած բոլոր հաշմանդամների համար պետք է նախատեսված լինի, ելնելով մեկ փրկվողի մանևրելու հնարավորության տեսակարար մակերեսից, մ2/մարդ. թիկնաթոռ-սայլակով հաշմանդամ .....2,40  
ուղեկցողի հետ թիկնաթոռ-սայլակով հաշմանդամ .....2,65  
ինքնուրույն տեղաշարժվող հաշմանդամ .....0,75  
ուղեկցողի հետ տեղաշարժվող հաշմանդամ .....1,0

Հրդեհաանվտանգ գոտու կազմում կարող է ներառվել հարակից սյունասրահի կամ պատշգամբի մակերեսը, որոնք հարկի մնացած սենքերից անջատված են հակահրդեհային միջնորմներով:

5.5.8 Հրդեհաանվտանգ գոտիները հարկավոր է նախատեսել ուղղաձիգ հաղորդակցուղիների մոտ կամ դրանք նախագծել որպես ընդհանուր հանգույց՝ ելքով դեպի Չ1 տիպի չժխտվող սանդղավանդակ կամ նույնանման պատող կոնստրուկցիաներով թեքահարթակի սենք:

5.5.9 Հրդեհաանվտանգ գոտին պետք է անջատված լինի այլ սենքերից և հարակից միջանցքներից հակահրդեհային միջնորմներով հրակայունության հետևյալ սահմաններով. պատերը REI-90, ծածկերը - REI-60, դռները և պատուհանները - 1-ին տիպի:

5.5.10 Հակահրդեհային գոտիների կոնստրուկցիաները պետք է լինեն ԿՕ դասի (հրդեհաանվտանգ), իսկ հարդարման և ծածկույթների նյութերը պետք է համապատասխանեն ՀՀՇՆ II-8.04.01-ի 6.25՝ կետի պահանջներին: Հրդեհաանվտանգ գոտի տանող դռները պետք է լինեն հակահրդեհային ինքնափակվող փեղկերում՝ խտուցքով:

5.5.11 Հրդեհաանվտանգ գոտին պետք է լինի չժխտվող: Հրդեհի ժամանակ տարահանման ելքի մեկ բաց դռան դեպքում այստեղ պետք է ստեղծվի ավելցուկային ճնշում - 20 Պա:

Հրդեհաանվտանգ գոտի ելքեր ունեցող վերելակների հորաններում պետք է ստեղծվի օդի ճնշում՝ ՀՀՇՆ II-8.03 պահանջներին համապատասխան:

## 5.6 Ներքին սարքավորանք

5.6.1 Վտանգի վերաբերյալ տեղեկատվության և ազդանշանման միջոցների համակարգերը պետք է լինեն համալիր և նախանշեն տեսողական, ծայնային և շոշափողական տեղեկատվություն բոլոր կարգի հաշմանդամների համար նախատեսված սենքերում (բացառությամբ թաց գործընթացներով սենքերից): Այդ համակարգերը պետք է համապատասխանեն գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին:

Տեղեկատվության միջոցները (այդ թվում նաև նշանները, խորհրդանիշները) միևնույն շրջանում, կազմակերպությունում տեղաբաշխված շենքերի և կառուցվածքների կոմպլեքսի սահմաններում պետք է լինեն նույնական և համապատասխանեն գործող նորմատիվ փաստաթղթերով սահմանված նշաններին:

5.6.2 ԲՍԽ-երի հաճախելու կամ բնակվելու համար մատչելի գոտիների և սենքերի (հատկապես զանգվածային հաճախման տեղերում), ինչպես նաև մուտքի հանգույցների և երթևեկության ուղիների տեղեկատվական միջոցների համակարգը պետք է ապահովի տեղեկատվության անխափանդությունը, ժամանակին կողմնորոշումը և հաճախվող օբյեկտների ու վայրերի միանշանակ ճանաչումը: Համակարգը պետք է նախատեսի հնարավորություն տեղեկատվություն ստանալու՝ տրամադրվող ծառայությունների տեսականու, գործառնային տարրերի տեղադրման և նշանակության, տարահանման ուղիների տեղադրման, արտակարգ իրավիճակներում վտանգի նախագգուշացնելու մասին:

5.6.3 Տեսողական տեղեկատվությունը պետք է տեղակայված լինի ցայտուն (կոնտրաստ) ֆոնի վրա, տեսողական հեռավորությանը համապատասխանող նշանների չափերով, և պետք է կապակցված լինի ինտերիերի գեղարվեստական լուծումների հետ:

5.6.4 ԲՍԽ-երին մատչելի սենքերի և հաղորդակցուղիների լուսավորումը հարկավոր է բարձրացնել մեկ աստիճանով՝ ՀՀՇՆ II-8.03 պահանջների համեմատ:

Լուսավորման անկումը հարևան սենքերի և գոտիների միջև չպետք է լինի 1:4 ավելի:

5.6.5 ԲՍԽ-երի կողմից հաճախվող հասարակական շենքերի և շինությունների սենքերն ու գոտիները, ինչպես նաև հաշմանդամների աշխատատեղերով արտադրական սենքերը, հարկավոր է սարքավորել հրդեհի

ագդարարման համակարգին միացված սինխրոն (ծայնային և լուսային) ազդանշանումով:

Վթարային ծայնային ազդանշանման համար հարկավոր է կիրառել 30 վրկ ընթացքում 15 դՔԱ ծայնի մակարդակ ապահովող սարքեր՝ սենքում ծայնի առավելագույն մակարդակը 5 դՔԱ-ով բարձրանալու դեպքում:

5.6.6 Հասարակական շենքերի նախասարահներում հարկավոր է նախատեսել ավտոմատ-հեռախոսի տիպի ծայնային տեղեկատվիչների տեղադրում, որոնցով կարող են օգտվել տեսողության թերություններով հաճախորդները, ինչպես նաև տեքստոֆոնների տեղադրում՝ լսողության թերությունով հաճախորդների համար:

5.6.7 Շենքերի պարփակ տարածությունները (տարբեր գործառնական նշանակության սենքերը, զուգարանի խցիկը, վերելակը և այլն), ինչպես նաև վերելակային նախասարահները, ուր սակավաշարժուն, այդ թվում նաև լսողության թերությունով քաղաքացին, կարող է հայտնվել մենակ, պետք է սարքավորված լինեն երկկողմանի կապով դիսպետչերի կամ հեթապահի հետ: Այլ դեպքերում հարկավոր է նախատեսել զանգի կոճակ: Հասարակական զուգարանում էլեկտրական զանգը կամ տեղեկատուն պետք է միացվի հեթապահ սենյակին: Այդպիսի սենքերում (խցիկներում) պետք է նախատեսվի վթարային լուսավորում:

5.6.8 Դռները բացելու և փակելու սարքերը, հորիզոնական բռնածողերը, ինչպես նաև տարբեր սարքերի բռնակները, լծակները, փականները և տարբեր ապարատների կոճակները, առևտրի և տոմսերի ավտոմատների անցքերը և այլ սարքավորումները, որոնցից կարող են օգտվել շենքի ներսում գտնվող ՔՍՄ-երը, հարկավոր է տեղադրել հատակից 1,1 մ ոչ ավելի և 0,85 մ ոչ պակաս բարձրության վրա և սենքի կողապատից կամ այլ ուղղաձիգ հարթությունից 0,4 մ ոչ պակաս հեռավորության վրա:

Սենքերում անջատիչները և վարդակները պետք է նախատեսել հատակի մակարդակից 0,8 մ բարձրության վրա:

5.6.9 Շենքերում անհրաժեշտ է կիրառել դռների այնպիսի բռնակներ, կողպեքներ, սողնակներ և դռները բացելու ու փակելու այլ սարքեր, որոնց ձևը թույլ կտա հաշմանդամին օգտվել դրանցից մեկ ձեռքով և չի պահանջի չափից դուրս ուժերի լարում կամ ձեռքի առավելագույն ոլորում դաստակում: Նպատակահարմար է նախատեսել դյուրակառավարվող սարքեր և մեխանիզմներ, ինչպես նաև Ռ-աձև բռնակներ:

Շարժական դռների փեղկերի բռնակները պետք է տեղադրվեն այնպես, որպեսզի դռները լրիվ բացված լինելու դեպքում բռնակները դյուրամատչելի լինեն երկու կողմից:

Միջանցքի կամ սենքի անկյունում տեղակայված դռների բռնակները պետք է տեղադրվեն կողապատից 0,6 մ ոչ պակաս հեռավորության վրա:

5.6.10 Այն սենքերի մուտքի դռների վրա, ուր ՔՍՄ-երի գտնվելը վտանգավոր է կամ կատեգորիկ չի թույլատրվում (բոլորներում, օդափոխման խցերում, տրանսֆորմատորային հանգույցներում և այլն), հարկավոր է տեղադրել փականներ, որոնք կբացառեն ազատ մուտքը սենքի ներս: Նման սենքերի դռների բռնակները պետք է ունենան շոշափելով ընկալվող տարբերիչ նշաններով կամ անհարթություններով մակերևույթ:

5.6.11 Շենքի ներսում սենքերի տեղեկատվության նշանակումները պետք է կրկնօրինակվեն ռելիեֆային նշաններով և տեղադրվեն դռան մոտ, բռնակի կողմից և ամրացված լինեն 1,4-1,75 մ բարձրության վրա:

Հանդերձարաններում և զգեստապահարաններում համարակալումը պետք է լինի ռելիեֆային և կոնտրաստ ֆոնի վրա:

5.6.12 Նախագծում կիրառվող նյութերը, հանդերձանքը, սարքավորումը, շինվածքները, սարքերը, որոնք օգտագործվում են հաշմանդամների կողմից, պետք է ունենան պետական սանիտարահակահամաձարակային ծառայության մարմինների հիգիենիկ հավաստագրեր (սերտիֆիկատներ):

## 5.7 Սանիտարահիգիենիկ սենքեր

5.7.1 Հասարակական զուգարաններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում տեղադրված (բացառությամբ ՄՍԻՊ 2.08.02-ի 3.5 կետում նշվածներից), անհրաժեշտ է նախատեսել առնվազն մեկ ունիվերսալ խցիկ՝ մատչելի բոլոր կարգերի քաղաքացիների համար:

Բոլոր տեսակի հասարակական շենքերում հաճախորդների 50 մարդ և ավելի հաշվարկային թվաքանակի, կամ շենքում 60 րոպե և ավելի հաշվարկային տևողությունից գտնվելու դեպքում, պետք է նախատեսել զուգարան ունիվերսալ խցիկով:

5.7.2 Շենքերում, որտեղ աշխատում են հաշմանդամներ, զուգարանները պետք է լինեն յուրաքանչյուր հարկում, անկախ աշխատողների թվաքանակից, ընդ որում, խցիկների ընդհանուր թվաքանակից առնվազն մեկը պետք է լինի ունիվերսալ:

Տեսողական թերություններով մարդկանց և թիկնաթոռ-սայլակով հաշմանդամների համար նախատեսված զուգարանները պետք է տեղադրվեն աշխատատեղից 60 մ ոչ ավելի հեռավորության վրա: Տեսողական թերությունով հաշմանդամ տղամարդկանց և կանանց զուգարանների հարևան տեղադրումը ցանկալի չէ:

5.7.3 Հասարակական ցնցուղարաններում հարկավոր է նախատեսել առնվազն մեկ խցիկ՝ սարքավորված թիկնաթոռ-սայլակով հաշմանդամի համար, որի առջև հարկավոր է նախատեսել թիկնաթոռ-սայլակի մոտեցումը ապահովող տարածություն:

5.7.4 Կազմակերպությունում աշխատող հենաշարժային ապարատի և տեսողական թերություններով հաշմանդամների համար անհրաժեշտ սանիտարահիգիենիկ սենքերում անկախ արտադրական պրոցեսների սանիտարական բնութագրումներից, խցիկների և սարքվածքների քանակը պետք է սահմանել, ելնելով 3 հաշմանդամին 1 ունիվերսալ ցնցուղախցիկ, 7 հաշմանդամին 1 վաճարան հաշվարկից:



Անհրաժեշտ է նախատեսել փակ ցնցուղախցիկներ դեպի դուրս բացվող դռներով մուտքով անմիջապես հանդերձարանից:

Նշված կարգերի հաշմանդամների համար նախատեսված լվացարանասենյակները պետք է տեղադրել անմիջապես հանդերձարանային բլոկում կամ նրան հարակից: Այդ դեպքում լվացարանների հաշվարկային բանակի 40%-ը պետք է տեղադրել աշխատատեղերին մոտ:

5.7.5 Ընդհանուր օգտագործման զուգարանի ունիվերսալ խցիկը հատակագծում պետք է ունենա չափեր. 1,65 մ-ից ոչ պակաս լայնություն և 1,8 մ-ից ոչ պակաս խորություն: Խցիկում զուգարանակոնքի մոտ հարկավոր է նախատեսել տարածություն թիկնաթոռ-սայլակը տեղադրելու համար, ինչպես նաև կախիչներ՝ հագուստի, հենակների և այլ պարագաների համար:

Բոլոր կարգի քաղաքացիների, այդ թվում՝ հաշմանդամների օգտվելու համար նախատեսված ունիվերսալ խցիկում կամ այլ սանիտարահիգիենիկ սենքերում, հարկավոր է նախատեսել անհրաժեշտության դեպքում բռնածողերի, մետաղածողերի, շրջվող կամ հետ ծալովի մատատեղի տեղադրման հնարավորություն:

5.7.6 Բնակելի շենքերում սանիտարահիգիենիկ սենքերի չափերը հատակագծում պետք է լինեն ոչ պակաս, մ. լողասենյակի կամ համատեղված սանհանգույցի ..... 2,2x2,2, զուգարանի և լվացարանասենյակի (ծեռքի լվացարան) ..... 1,6x2,2, զուգարան առանց լվացարանի ..... 1,2x1,6:

5.7.7 Հասարակական և արտադրական շենքերի սանիտարակենցաղային սենքերից օգտվող հաշմանդամների, այդ թվում նաև թիկնաթոռ-սայլակով հաշմանդամների կողմից օգտագործվող գոտիների երկրաչափական հարաչափերը հարկավոր է ընդունել ըստ 1 աղյուսակի:

**Աղյուսակ 1**

Անվանումը	Չափսերը հատակագծում (մաքուր), մ
Ցնցուղախցիկներ.	
փակ	1,8x1,8
բաց և միջանցիկ անցումով կիսացնցուղային	1,2x0,9
Կանանց անձնական հիգիենայի խցիկներ	1,8x2,6
Ջուգարանների խցիկներ	1,8x1,65
Նստարաններ հանդերձարաններում	0,6x0,8
Պահարաններ հանդերձարաններում՝ փողոցի և տնային հագուստի համար	0,4x0,5

5.7.8 Սպորտային դահլիճների հանդերձարաններում թիկնաթոռ-սայլակով օգտվող հաշմանդամի հագուստի պահման անհատական պահարանները պետք է տեղադրել ներքին հարկաշարքում, հատակից 1,3 մ ոչ ավելի բարձրության վրա: Տնային հագուստը բաց եղանակով պահելու դեպքում կախիչները հանդերձարաններում պետք է տեղադրվեն նույն բարձրության վրա: Կազմակերպությունների կենցաղային սենքերում անհատական պահարանները պետք է լինեն համատեղված (փողոցի, տնային և աշխատանքային հագուստը պահելու համար):

5.7.9 Հանդերձարաններում շարքերի միջև անցումների լայնությունը պետք է ընդունել ոչ պակաս, մ. փակ և բաց ցնցուղախցիկների, խմբային և առանձին լվացարանների, զուգարանների, միգարանների (պիտուարների) ..... 1,8  
 նստարաններով հանդերձարանների պահարանների համար (հաշվի առնելով նստարանները) ..... 2,4  
 նույնը առանց նստարանների ..... 1,8

5.7.10 Անհրաժեշտ է կիրառել լծակային կամ ճնշումային գործողությամբ ջրի փականներ, հնարավորության դեպքում՝ կառավարվող էլեկտրոնային համակարգերով:

Ջուգարանակոնքում ջրի բաց թողման կարգավորիչը տեղադրվում է խցիկի կողապատի վրա:

**6. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱԿԱՎԱՇՆՐԺՈՒՆ ԽՄԲԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄԵՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՁՆԵՐ**

**6.1 Բնակելի շենքեր և սենքեր**

6.1.1 Բնակելի տները և հասարակական շենքերի բնակելի սենքերը հարկավոր է նախագծել, ապահովելով հաշմանդամների պահանջները, ներառյալ.

- ա) բնակարանի կամ բնակելի սենքի մատչելիությունը շենքի մուտքից,
- բ) շենքի բոլոր հասարակական սենքերի մատչելիությունը բնակարանից կամ բնակելի սենքից,
- գ) հաշմանդամի պահանջներին բավարարող սարքավորանքների կիրառում,
- դ) սարքավորանքի և սարքերի օգտագործման անվտանգության և հարմարավետության ապահովում,
- ե) տնամերձ տարածքի և մասնավորապես շենքի սարքավորումը՝ անհրաժեշտ տեղեկատվական համակարգերով:

6.1.2 Հաշմանդամների և մեծահասակ մարդկանց համար նախատեսված բնակարաններով բազմաբնակարան բնակելի տները հարկավոր է նախագծել հրակայունության երկրորդ աստիճանից ոչ ցածր:

6.1.3 Բնակելի տներում բնակարանների քանակը և դրանց մասնագիտացումը ըստ հաշմանդամների առանձին կարգերի սահմանվում է նախագծման առաջադրանքով:

Բնակելի սենքերի նախագծման դեպքում պետք է ելնել հաշմանդամների և բնակչության այլ սակավաշարժուն խմբերի առանձին կարգերի պահանջարկներին համապատասխան դրանց վերասարքավորման պայմանից:

6.1.4 Առաջին հարկի մակարդակում, թիկնաթոռ-սայլակներից օգտվող հաշմանդամներով ընտանիքների բնակարանների տեղակայման դեպքում, հարկավոր է ապահովել ելքի հնարավորություն անմիջապես մերձտնային տարածք: Բնակարանին կից նախատեսված առանձին մուտքի և վերհանի սարքավորանքի համար պետք է ավելացնել բնակարանի մակերեսը 12 մ<sup>2</sup>-ով:

6.1.5 Բնակելի սենքի նվազագույն չափը պետք է կազմի.

ա) թիկնաթոռ-սայլակով տեղաշարժվող հաշմանդամի համար - 12 մ<sup>2</sup> ոչ պակաս,

բ) անհատական աշխատանքային գործունեությամբ զբաղվող հաշմանդամի համար՝ մինչև 16 մ<sup>2</sup>:

6.1.6 Թիկնաթոռ-սայլակներով հաշմանդամների ընտանիքների սոցիալ-բնակելի ֆոնդի բնակելի տներում խոհանոցի մակերեսը հարկավոր է ընդունել 9մ<sup>2</sup> ոչ պակաս: Այդպիսի խոհանոցների լայնությունը պետք է լինի 2,3 մ ոչ պակաս՝ սարքավորանքների միակողմանի տեղադրման դեպքում և 2,9 մ - երկկողմանի կամ անկյունային տեղադրման դեպքում:

Խոհանոցները հարկավոր է կահավորել էլեկտրասալերով:

6.1.7 Սանիտարա-հիգիենիկ սենքերի չափերը բնակարաններում պետք է համապատասխանեն 5.7.6 կետում նշված պահանջներին:

Թիկնաթոռ-սայլակից օգտվող հաշմանդամ ունեցող ընտանիքների բնակարաններում, զուգարանակոնքով սարքավորված սենք տանող մուտքը թույլատրվում է նախագծել խոհանոցից կամ բնակելի սենյակից:

6.1.8 Հաշմանդամներով (այդ թվում նաև թիկնաթոռ-սայլակով) ընտանիքների բնակարաններում օժանդակ սենքերի լայնությունը պետք է լինի ոչ պակաս, մ.

նախասրահի (սայլակը պահելու հնարավորությամբ) .....1,6,

ներբնակարանային միջանցքների .....1,15:

6.1.9 Անհրաժեշտության դեպքում, բնակելի տներում, հարկավոր է բնակարանի կազմում նախատեսել հաշմանդամների կողմից օգտագործվող գործիքների, նյութերի և շինվածքների, ինչպես նաև տիֆլուտեխնիկայի և բռայլեվյան գրականության պահման համար պահեստարան սարքելու հնարավորություն, ոչ պակաս 4,0 մ<sup>2</sup> մակերեսով:

6.1.10 Հյուրանոցներում, մոթելներում, պանսիոնատներում, քեմպինգներում և այլն, բնակելի տեղերի 10%-ը պետք է նախագծվեն ունիվերսալ, հաշվի առնելով ցանկացած կարգի հաճախորդների տարաբնակեցումը (եթե նախագծման առաջադրանքով որոշված չէ ունիվերսալ կամ մասնագիտացված սկզբունքով սարքավորված սենքերի քանակը):

6.1.11 Հրդեհային ազդանշանումը հարկավոր է նախագծել հաշվի առնելով հաշմանդամների բոլոր կարգերի կողմից այն ընկալելու անհրաժեշտությունը:

Հաշմանդամների բնակելի սենքերը պետք է սարքավորված լինեն ինքնուրույն հրդեհային ազդասարքերով:

Հարկավոր է օգտագործել ձայնային և լուսային ազդանշանմամբ դոմոֆոններ:

Ազդանշանիչների տեղադրման տեղերը և դրանց քանակը սահմանվում է նախագծման առաջադրանքով:

## 6.2 Հասարակական շենքերում հաճախորդների սպասարկման գոտիները

6.2.1 Տարբեր նշանակության հասարակական շենքերի ու շինությունների հաճախորդների սպասարկման գոտում հաշմանդամների և բնակչության այլ սակավաշարժուն խմբերի համար նստատեղերը հարկավոր է նախատեսել կազմակերպության ընդհանուր տարողության կամ հաճախորդների հաշվարկային թվաքանակի 5%-ից ոչ պակաս, այդ թվում նաև շենքում ԲՍԽ-երին տրամադրվող մասնագիտացված սպասարկման գոտիներում:

6.2.2 Հաճախորդների սպասարկման մի քանի նույնական տեղերի (սարքերի, սարքվածքների) առկայության դեպքում, դրանց ընդհանուր քանակի 5%-ը, բայց ոչ պակաս մեկից, պետք է նախագծվի այնպես, որ հաշմանդամը կարողանա դրանցից օգտվել:

6.2.3 ԲՍԽ-երի համար մատչելի յուրաքանչյուր հարկում պետք է նախատեսել 2-3 տեղանոց հանգստի գոտիներ, այդ թվում նաև թիկնաթոռ-սայլակով հաշմանդամների համար:

6.2.4 Ինտերիերների նախագծման, սարքերի և սարքվածքների, տեխնոլոգիական և այլ սարքավորանքի ընտրության և տեղադրման դեպքում հարկավոր է ելնել այն հանգամանքից, որ թիկնաթոռ-սայլակով հաճախորդի հասանելիության գոտին պետք է գտնվի հետևյալ սահմաններում.

ա) հաճախորդից դեպի կողքանց տեղակայման դեպքում - հատակի նիշից 1,4 մ ոչ բարձր և 0,3 մ ոչ ցածր,

բ) ձակատային մոտեցման դեպքում - հատակից 1,2 մ ոչ բարձր և 0,4 մ ոչ ցածր:

Անհատական օգտագործման սեղանների, վաճառատեղանների և սպասարկման այլ տեղերի մակերևույթը, որը օգտագործվում է թիկնաթոռ-սայլակով հաճախորդի կողմից, պետք է գտնվի հատակի մակարդակից 0,8 մ ոչ ավելի բարձրության վրա:

6.2.5 Դահլիճներում հաշմանդամների համար նախատեսված տեղերը հարկավոր է տեղակայել նրանց համար

մատչելի գոտում, ապահովելով.

ա) ցուցադրման, դիտահանդիսային, տեղեկատվական, երաժշտական ծրագրերի և նյութերի լիարժեք ընկալումը,

բ) սննդի հարմարավետ ընդունումը (ճաշասրահներում կամ դահլիճներին կից կողասրահներում),

գ) աշխատանքի համար օպտիմալ պայմանները (գրադարանների ընթերցասրահներում),

դ) հանգիստը (սպասասրահներում):

Դահլիճային սենյակում երկուսից ոչ պակաս ապակենտրոնացված ելքեր պետք է հարմարեցված լինեն ԲՍԽ-երի անցնելու համար:

6.2.6 Հանդիսասրահներում հաշմանդամների նստատեղերը նախընտրելի է տեղակայել առանձին շարքերում, ինքնուրույն տարահանման ուղիով, որը չի հատվում հանդիսատեսների մնացած մասի տարահանման ուղիների հետ: 800 և ավելի նստատեղ ունեցող հանդիսասրահներում թիկնաթոռ-սայլակով հաշմանդամների նստատեղերը հարկավոր է տարակենտրոնացնել տարբեր գոտիներում՝ տեղադրելով դրանք տարահանման ելքերի մոտ, բայց մեկ տեղում երեքից ոչ ավելի պայմանով:

Հանդիսասրահում հեռավորությունը հաշմանդամի գտնվելու ցանկացած վայրից մինչև միջանցք, նախասրահ, դուրս տանող տարահանման ելքեր կամ մարզահանդիսային դահլիճների տրիբունաների տարահանման ելանցքը (յուկը), չպետք է գերազանցի 40 մ: Անցումների լայնությունը պետք է մեծացվի թիկնաթոռ-սայլակի ազատ անցման լայնության չափով (0,9 մ):

6.2.7 Բեմահարթակի առջև կամ դահլիճի վերջում ելքատեղ-բացվածքի մոտ թիկնաթոռ-սայլակով հանդիսատեսների համար հարկավոր է նախատեսել ազատ հարթակներ՝ առնույնս 1,8 մ ոչ պակաս լայնությամբ:

6.2.8 Ամֆիթատրոնով լսարաններում, հանդիսասրահներում և դասախոսությունների դահլիճներում թիկնաթոռ-սայլակով հանդիսատեսների նստատեղերի մոտ կամ այդ գոտիներում հարկավոր է նախատեսել անվտանգության միջոցներ (պարիսպ, բուֆերային գոտի, կողաշարվածք և այլն):

6.2.9 50 մարդուց ավելի տարողությամբ ֆիքսված նստատեղերով սարքավորված ամֆիթատրոնով լսարաններում, հանդիսասրահներում և դասախոսությունների սրահներում, անհրաժեշտ է թիկնաթոռների քանակի 4%-ից ոչ պակասը նախատեսել անհատական լսողության ներմոնտաժված համակարգերով:

6.2.10 Լսողության թերություններով անձանց համար նախատեսված նստատեղերը պետք է տեղադրել ծայրի աղբյուրից 10 մ ոչ ավելի հեռավորության վրա կամ սարքավորել ծայրի ուժեղացման անհատական հատուկ սարքերով:

Թույլատրվում է դահլիճներում կիրառել ինդուկցիոն ուրվագիծ կամ այլ անհատական անլարային սարքեր: Այդ տեղերը հարկավոր է տեղակայել բեմահարթակի, ինչպես նաև սուրդոթարգմանչի լավ տեսողության գոտում: Թարգմանչի համար լրացուցիչ գոտու տրամադրման անհրաժեշտությունը սահմանվում է նախագծման առաջադրանքով:

6.2.11 Սենյակում, որտեղ ինտերիերների գեղարվեստական լուծման նկատմամբ ներկայացվում են հատուկ պահանջներ, հաշմանդամների համար տեսողական (վիզուալ) տեղեկատվություն օգտագործելու անհնարին լինելու դեպքում, պատկերասրահների, թանգարանների ցուցասրահներում թույլատրվում է օգտագործել այլ կոմպենսացնող միջոցառումներ:

6.2.12 Սպորտային կառույցների հանդերձարաններում հաշմանդամների համար հարկավոր է նախատեսել.

ա) թիկնաթոռ-սայլակի պահելու տեղ,

բ) անհատական խցիկներ (յուրաքանչյուրը ոչ պակաս 4 մ<sup>2</sup> մակերեսով)՝ մեկ խցիկ միաժամանակ մարզվող թիկնաթոռ-սայլակից օգտվող երեք հաշմանդամի համար,

գ) անհատական պահարաններ հագուստի համար (երկուսից ոչ պակաս) 1,7 մ ոչ ավելի բարձրությամբ, այդ թվում նաև հենակների և պրոտեզների պահման համար,

դ) 3 մ ոչ պակաս երկարությամբ, 0,7 մ ոչ պակաս լայնությամբ և 0,5 մ ոչ ավելի բարձրությամբ նստարան:

Նստարանի շուրջը թիկնաթոռ-սայլակի անցնելու համար պետք է ապահովվի ազատ տարածություն: Կողմացված նստարան տեղադրելու անհնարինության դեպքում հարկավոր է որևէ պատի երկարությամբ նախատեսել 0,6x2,5 մ ոչ պակաս չափսերով նստարան:

6.2.13 Հանդերձարաններին կից հանգստի սենյակում հարկավոր է նախատեսել յուրաքանչյուր միաժամանակ մարզվող թիկնաթոռ-սայլակով հաշմանդամին լրացուցիչ 0,4 մ<sup>2</sup> ոչ պակաս մակերես, իսկ շոգեբաղնիքին կից հանգստի սենյակը պետք է լինի 20 մ<sup>2</sup> ոչ պակաս մակերեսով:

6.2.14 Սննդի օբյեկտների դահլիճներում հաշմանդամների նստատեղերը (սեղանները) հարկավոր է տեղադրել ելքի մոտ, բայց ոչ անցումային գոտում:

### 6.3 Աշխատավայրերը

6.3.1 Կազմակերպություններ նախագծելիս հարկավոր է նախատեսել հաշմանդամների համար աշխատատեղեր՝ բնակչության սոցիալական պաշտպանության տեղական մարմինների կողմից մշակվող՝ հաշմանդամների մասնագիտական վերականգնման ծրագրերին համապատասխան:

Հաշմանդամների աշխատատեղերի քանակը և ձևերը (մասնագիտացված կամ սովորական), դրանց տեղաբաշխումը շենքի ծավալահատակագծային կառուցվածքում (ապակենտրոնացված կամ մասնագիտացված արտադրամասերում, արտադրական տեղամասերում և հատուկ սենյակում), ինչպես նաև անհրաժեշտ լրացուցիչ

սենքերը սահմանվում են նախագծման առաջադրանքով:

6.3.2 Հաշմանդամների աշխատատեղերը պետք է լինեն առողջության համար անվտանգ և ռացիոնալ կազմակերպված: Դրանք պետք է ունենան պետական սանիտարահակահամաճարակային մարմինների համապատասխան եզրակացություն: Նախագծման առաջադրանքում հարկավոր է սահմանել հաշմանդամների մասնագիտացումը և, անհրաժեշտության դեպքում, ներառել հիվանդության կոնկրետ ձևի համար հատուկ հարմարեցված կահույքի, սարքավորանքների և օժանդակ սարքվածքների համակազմը:

6.3.3 Աշխատանքային գոտում (աշխատատեղի տարածությունում) կամ սենքում պետք է ապահովված լինի գործող նորմատիվ փաստաթղթերին համապատասխան միկրոկլիմային ներկայացված սանիտարահիգիենիկ պահանջների համալիր, ինչպես նաև հաշմանդամի հիվանդության տեսակից կախված լրացուցիչ պահանջների կատարումը:

6.3.4 Ծառայողական սենքերի մակերեսները հարկավոր է ընդունել մեկ աշխատող թիկնաթոռ-սայլակով հաշմանդամին տրամադրվող մակերեսի հաշվարկից, բայց ոչ պակաս, մ<sup>2</sup>.

ա) գրասենյակային, ադմինիստրատիվ և օֆիսային սենքերում .....5,65,

բ) կոնստրուկտորական բյուրոներում .....7,65:

6.3.5 Հենաշարժային ապարատի վնասվածքով և տեսողության թերությունով հաշմանդամների համար նախատեսված աշխատատեղի հեռավորությունները զուգարաններից, ծխարաններից, տաքանալու կամ հովանալու, կիսացնցուղների և խմելու ջրի սարքվածքների տեղադրման սենքերից պետք է լինեն ոչ ավելի, մ.

ա) շենքերի սահմաններում ..... 60,

բ) հիմնարկի, կազմակերպության տարածքի սահմաններում .....150:

6.3.6 Աշխատող հաշմանդամների սանիտարակենցաղային սպասարկումը պետք է ապահովվի ՄՆԻՊ 2.09.04 և սույն փաստաթղթի պահանջներին համապատասխան:

6.3.7 Այն դեպքում, երբ թիկնաթոռ-սայլակով հաշմանդամների համար բարդություն է առաջացնում հասարակական սննդի վայրին մոտենալը, կազմակերպություններում հարկավոր է լրացուցիչ նախատեսել սննդի ընդունման սենյակ՝ յուրաքանչյուր հաշմանդամին հասնող 1,65 մ<sup>2</sup>, բայց 12 մ<sup>2</sup> ոչ պակաս մակերեսով:

## 7. ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 7.1 Մասնագիտացված բնակելի շենքեր

7.1.1 Մասնագիտացված բնակելի շենքերում բնակելի սենքերը հարկավոր է նախագծել ոչ միջանցիկ բնակելի բջիջների կազմում, որոնք պետք է միավորվեն 25 մարդուց ոչ ավելի տարողությամբ բնակելի խմբերի:

7.1.2 Հաշմանդամների և ծերերի համար մասնագիտացված բնակելի շենքերում պետք է նախատեսվեն մշակութային և բժշկական սպասարկման սենքեր:

Մասնագիտացված բնակելի շենքերի համալիրում բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգնողական մասնագիտացված կենտրոնների կազմակերպությունների, ինչպես նաև նշված կազմակերպությունների ուսումնարարական նշանակության սենքերի նախագծման դեպքում, հարկավոր է բնակելի շենքերի կազմում ներառել փակ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև տաքացվող անցումներ, կամ դրանք տեղաբաշխել շենքին ներկառուցված-կցակառուցված բլոկում կամ շենքի հետ կապված առանձին կանգնած բլոկում:

7.1.3 Յուրաքանչյուր բնակելի խմբի սպասարկման համար հաշմանդամների և ծերերի տուն-ինտերնատներում հարկավոր է նախատեսել սենքեր, ոչ պակաս մակերեսով, մ<sup>2</sup>.

ա) լողարան - 12,

բ) զուգարան - 4,5,

գ) ցնցուղարաններ հազմվելու տեղով - 3,

դ) սանիտարական սենյակ - 16,

ե) կենցաղային պահանջների սենյակ - 12,

զ) պահոցներ մաքուր և աղտոտված սպիտակեղենի համար:

Բացի այդ, բնակելի բջջի կազմում ինքնասպասարկման հնարավորություն ունեցող հաշմանդամների կամ ծերերի համար պետք է նախատեսվի շփվելու, հաղորդակցվելու սենյակ, յուրաքանչյուր բնակչի համար 1,2 մ<sup>2</sup> ոչ պակաս հաշվարկային մակերեսով և խոհանոց-բուֆետ՝ յուրաքանչյուր բնակչին 0,6 մ<sup>2</sup> ոչ պակաս մակերեսով:

7.1.4 Հաշմանդամների և ծերերի ինտերնատ-տներում հարկավոր է բժշկական սայլակների և թիկնաթոռ-սայլակների պահման համար նախատեսել սենք կամ որևէ տեղամաս՝ 4 մ<sup>2</sup> ոչ պակաս մակերեսով:

7.1.5 Նյարդահոգեբուժական ինտերնատների նախագծման դեպքում, հարկավոր է նախատեսել խնամառուների ազատ սպասարկման վերականգնողական պրոֆիլի, խնամառուների դիտողական սպասարկման վերականգնողական պրոֆիլի, մշտական խնամք պահանջող անկողնային հիվանդների սպասարկման բաժանմունքներ:

7.1.6 Նյարդահոգեբուժական ինտերնատի ճաշարանը առանձին կանգնած շենքում տեղադրելու դեպքում, հարկավոր է նախատեսել նախասրահ հանդերձարանով, որի հաշվարկային մակերեսը պետք է ընդունել 0,25 մ<sup>2</sup> ոչ պակաս ճաշարանի յուրաքանչյուր նստատեղի համար:

7.1.7 Հակահրդեհային միջնորմներում և պատերում, որոնք անջատում են բնակելի սենքերի խմբերը

սպասարկման սենքերի բլոկներ տանող միջանցքներից և անցումներից, ինչպես նաև այրվող նյութերի պահման և վերամշակման հետ կապված պահեստարանների և արվեստանոցների սենքերում, հարկավոր է նախատեսել 2-րդ տիպի հակահրդեհային դռներ:

## 7.2 Սոցիալական սպասարկման տարածքային կենտրոններ

7.2.1 Սոցիալական սպասարկման տարածքային կենտրոնները հարկավոր է նախագծել երկու հիմնական տիպերի՝ տնային սպասարկման և ցերեկային խնամքի կենտրոններ, որոնց թույլատրվում է միավորել մեկ շենքում, որպես միասնական կենտրոնի բաժանմունքներ, ինչպես նաև ներառել հաշմանդամների և ծերերի տուն-ինտերնատների կազմում:

Տարածքային կենտրոնը բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգնման մասնագիտացված կազմակերպության կամ նրա բաժանմունքների հետ միավորելու դեպքում, հարկավոր է համատեղել մասնատիպ սենքերը և ծառայությունները:

7.2.2 Սոցիալական սպասարկման տարածքային կենտրոնը կամ նրա բաժանմունքները բնակելի շենքի (որը նախատեսված է հաշմանդամների և ծերերի բնակման համար) կազմում ներառելու դեպքում, տարածքային կենտրոնի սենքերը պետք է նախագծվեն հաշվի առնելով շենքում բնակվող հաշմանդամների և ծերերի 30%-ից ոչ պակաս թվաքանակի լրացուցիչ սպասարկումը:

7.2.3 Սոցիալական սպասարկման տարածքային կենտրոնին կից պետք է նախատեսվեն մատենավարական - տեղեկատու և ընդհանուր բուժական միջոցառումների սենքեր, հետևյալ կազմով և մակերեսով, մ<sup>2</sup>, ոչ պակաս.

ա) երկու բուժագործության սենյակներ, յուրաքանչյուրը - 12,

բ) վիրակապարան - 22,

գ) երեք առանձնասենյակ, յուրաքանչյուրը - 18,

դ) լաբորատոր սենքեր -14 (ընդհանուր մակերեսը),

ե) երկու սենք, յուրաքանչյուրը՝ 12, պրոթեզները փորձելու և դրանք հարմարեցնելու համար, ինչպես նաև մաքուր և աղտոտ սպիտակեղենի առանձին պահեստանոցներ:

7.2.4 Ուսումնասիրտադրական դասարանները և արհեստանոցները պետք է տեղակայվեն ներկառուցված, ներկառույց-կցակառուցված կամ առանձին կանգնած բլոկերում, պահպանելով հաշմանդամների տարահանման պայմանները և դասարանների ու արհեստանոցների պրոֆիլին համապատասխանող հակահրդեհային պահանջները:

7.2.5 Ցերեկային խնամքի կենտրոնի կամ բաժանմունքի կազմում պետք է ներառել սենքեր, ոչ պակաս մակերեսով, մ<sup>2</sup>.

ա) հանդերձարան - 15

բ) սենյակներ, յուրաքանչյուրը 36՝ հաշմանդամների և ծերերի համար,

գ) սենյակներ, յուրաքանչյուրը 16 մ՝ ցերեկային հանգստի համար,

դ) խոհանոց-բուֆետ - 9,

ե) ցնցուղարան՝ հագուստը փոխելու սենքով:

7.2.6 Հաշմանդամների և ծերերի կացության սենքերը պետք է միավորեն 25 մարդուց ոչ ավելի խմբերի և տեղակայվեն առաջին հարկում: Ցերեկային կացության սենքերը երկրորդ հարկից վեր տեղադրված լինելու դեպքում, հարկավոր է նախատեսել վերելակ:

7.2.7 Տնային սպասարկման կենտրոնի կամ բաժանմունքի կազմում պետք է նախատեսել դիսպետչերական կետ և անձնակազմի սենյակներ, մթերքի պահման, ինչպես նաև մաքուր ու աղտոտ սպիտակեղենի առանձին պահեստանոցներ:

*Հավելված Ա  
(պարտադիր)*

## ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

**Սույն նորմերի իմաստով օգտագործված հասկացություններն են՝**

**Ադապտացիա** - նոր պայմաններին հարմարեցում, այստեղ՝ կենսագործունեության միջավայրի, շենքերի ու շինությունների հարմարեցումը հաշվի առնելով բնակչության սակավաշարժուն խմբերի պահանջարկները:

**Տեղեկատվության վիզուալ միջոցներ** - այստեղ՝ տեսողականորեն տարբերող տեքստերի, նշանների, խորհրդանիշների, նաև լսողության ֆունկցիաների խախտումով մարդկանց լուսային ազդարարման տեսքով փոխանցվող տեղեկատվության կրիչներ:

**Բնակչության սակավաշարժուն խմբեր (ՔՍԽ)** - մարդիկ, որոնք ինքնուրույն տեղաշարժվելու, ծառայություններ, անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու կամ տարածության մեջ կողմնորոշվելու դժվարություն են զգում:

Բնակչության սակավաշարժուն խմբերին են դասվում՝ հաշմանդամները, առողջության ժամանակավոր խանգարումներով մարդիկ, հղի կանայք, մեծահասակները, մանկական սայլակներով անձինք և այլն:

**ՔՍԽ-ին մատչելի շենքեր և շինություններ** - շենքեր և շինություններ, որոնցում իրացված է սույն նորմերի

նորմատիվային պահանջներին համապատասխանող ԲՍԽ-ի մատչելիությունը և անվտանգությունը ապահովող ճարտարապետահատակագծային, կոնստրուկտիվ, ինժեներատեխնիկական, էրգոնոմիկական, և կազմակերպչական միջոցառումների համալիրը:

**Հաշմանդամ** - անձ, որը, առողջության խաթարմամբ պայմանավորված կենսագործունեության սահմանափակումների հետևանքով ունի սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն:

**Վերելակի սրահ** - վերելակի մուտքի մոտ տեղակայված հատուկ սենյակ:

**Ժեստային (ձեռածության) լեզվի թարգմանիչ (սուրդոթարգմանիչ)** - մասնագետ, ով իրականացնում է ձայնային տեղեկատվության թարգմանությունը ժեստային լեզվով՝ խուլ ու համր և լսողության խանգարումներով մարդկանց համար:

**Հրդեհաանվտանգ գոտի** - շենքի, շինության հրդեհային հատվածամասի, տվյալ ժամանակահատվածում (հրդեհի առաջացման պահից մինչև փրկարարական աշխատանքների ավարտը) հրդեհի վտանգավոր գործոններից մարդկանց պաշտպանության համար հակահրդեհային պատնեշներով անջատված մի մաս, որն ապահովված է տարահանման և փրկարարական միջոցառումների համալիրով:

**Երթևեկության գոտի** - հետիոտնային ուղու մաս, որը նախատեսված է մեկ ուղղությամբ մեկ շարքով երթևեկելու համար:

**Երթևեկության ուղի** - հետիոտնային ուղի ԲՍԽ-երի, այդ թվում նաև թիկնաթոռ-սայլակով հաշմանդամների կողմից օգտագործվող տեղամաս (ճանապարհներ, մայթեր, թեքահարթակներ և այլն), ինչպես նաև շենքերի և կառուցվածքների ներսում (հորիզոնական և ուղղաձիգ հաղորդակցուղիներ) տեղաշարժվելու համար օգտագործվող հետիոտնային ուղի:

**Տեղեկատվության միջոցների համակարգ (տեղեկատվական միջոցներ)** - այստեղ՝ տեղեկատվության կրիչների ամբողջություն, որոնք ապահովում են ԲՍԽ-երի ժամանակին կողմնորոշումը տարածության մեջ, աջակցում անվտանգ և հարմար տեղաշարժմանը, ինչպես նաև տեղեկացնում են կենսագործունեության միջավայրի հատկությունների մասին:

**Մասնագիտացված տարր** - այստեղ՝ տարր, որին (որպես նորմավորման օբյեկտի) ներկայացվում են հարմարվելու սպեցիֆիկ պահանջներ՝ հաշվի առնելով մարդու առողջության կոնկրետ կամ ամբողջական խանգարումները:

**Տեքստոֆոն** - ապարատ, լսողության խանգարումներով հաշմանդամների հեռախոսով հաղորդելու, ընդունելու և զրույց վարելու համար տեքստային ռեժիմով: Ապարատը ունի ստեղնաշար և տեքստային տեղեկատվությունները արտացոլելու դիսպլեյ:

**Տիֆլոտեխնիկական միջոցներ** - միջոցներ, որոնք հեշտացնում են տեսողության արատով տառապող մարդկանց աշխատանքը և տեղեկատվության իրացումը (մագնիստոֆոններ, դիկտոֆոններ, գրասարքեր, Բռայլի շրիֆտով գրամեքենա):

**Տեղեկատվության տակտիկ միջոցներ** - տեսողության արատով հաշմանդամներին փոխանցվող տեղեկատվության շոշափման միջոցով ընկալվող կրիչներ:

**Համապիտանի տարր** - այստեղ՝ տարր, որը նախագծվում է հաշվի առնելով նրա հնարավոր օգտագործումը բնակչության բոլոր կարգերի, ինչպես նաև ԲՍԽ-երի կողմից:

**Տարր** - որևէ բանի բաղադրիչ մասը, այստեղ՝ տեղամասի, շենքի կամ սենյակի ճարտարապետական, տեխնիկական կամ մեխանիկական բաղադրամասը, օրինակ՝ աշխատատեղ, հանգստի տեղ, ցնցուղարան, հեռախոսախցիկ, դուռ, կառավարող սարք, բռնակ, բռնածող և այլն:

**Բնակելի բջիջ** - բնակելի սենյակների խումբ, որոնք միավորված են ընդհանուր օգտագործման օժանդակ սենյակով:

Հավելված Բ  
(պարտադիր)

## ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻՑ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՓՐԿՄԱՆ ՀԱՍՈՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՎԵՐԵԼԱԿՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿ

Բ.1 Հաշմանդամներին մատչելի վերելակների անհրաժեշտ քանակը, որը օգտագործվում է հրդեհի դեպքում նրանց փրկման համար, որոշվում է ըստ բանաձևի

$$n = T_n / T_{\text{փր}}, \quad (\text{Բ.1})$$

որտեղ՝

$T_n$  - մեկ վերելակով փրկման հաշվարկային ժամանակն է, վրկ,

$T_{\text{փր}}$  - փրկման թույլատրելի ժամանակն է, հավասար 10 րոպ:

Հրշեջ ստորաբաժանումների փոխադրման համար նախատեսված վերելակը հրդեհի ժամանակ կարող է օգտագործվել հաշմանդամների փրկման համար:

Բ.2 Փրկման հաշվարկային ժամանակը որոշվում է ըստ բանաձևի.

$$T_h = TK, \quad (P.2)$$

որտեղ՝  
 $T$  - վերելակի շրջանային երթի ժամանակը, վրկ, հաշմանդամներին փրկելու դեպքում, որոշվում է ըստ (P.3) բանաձևի,

$K$  - հաշմանդամներին փրկելու համար անհրաժեշտ երթերի հաշվարկային քանակն է, որոշվում է ըստ (P.4) բանաձևի:

$$T_n = 2 \sum H_i / mV + 93, \quad (P.3)$$

որտեղ  
 $\sum H_i$  - այն հարկերի մակարդակների նիշերի գումարը, որոնցից պետք է կատարվի հաշմանդամների փրկումը առաջին հարկի մակարդակի նկատմամբ, մ,  
 $m$  - հարկերի քանակն է, որոնցից կատարվում է հաշմանդամների փրկումը  
 $V$  - վերելակի անվանական (նոմինալ) արագությունն է, մ/վրկ,

$$K = 1,43 \sum M / E, \quad (P.4)$$

որտեղ  
 $\sum M$  - հաշմանդամների և նրանց ուղեկցող մարդկանց գումարային քանակն է, բերված նախագծման առաջադրանքում, մարդ,  
 $E$  - վերելակի անվանական (նոմինալ) տարողությունը, մարդ:

Հավելված Գ  
 (պարտադիր)

### ՆՅՈՒԹԵՐ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՍԱԿԱՎԱՇԱՐԺՈՒՄ ԽՄԲԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ

Տարահանման ուղիներով ԲՍԽ-երի տեղաշարժման յուրահատկությունը հաշվի առնելու համար հարկավոր է կիրառել ԲՍԽ-երի երթևեկության հարաչափերի լրացուցիչ հաշվարկային նշանակությունները:

Գ.1 Շենքերից և շինություններից տարահանվող հոսքերում մարդկանց՝ ըստ շարժունակության հատկությունների, հարկավոր է ստորաբաժանել 4 խմբերի, համաձայն Գ.1 աղյուսակի:

Աղյուսակ Գ.1

Շարժունակության խմբերը	Շարժունակության խմբերի մարդկանց ընդհանուր բնութագրերը	Մարդկանց հորիզոնական պրոյեկցիայի միջին մակերեսը, f, մ
M1	Շարժունակության սահմանափակում չունեցող մարդիկ, այդ թվում նաև լսողության արատներով	0,1
M2	Անօգնական մարդիկ, որոնց շարժունակությունը ցածր է օրգանիզմի ծերության պատճառով (ծերության հաշմանդամներ), պրոթեզներով հաշմանդամներ, սպիտակ ձեռնափայտ օգտագործող տեսողության արատով հաշմանդամներ, հոգեկան խախտումներով մարդիկ	0,2
M3	Հաշմանդամներ, որոնք երթևեկելիս օգտվում են լրացուցիչ հենակներից (հենակներ, փայտեր)	0,3
M4	Հաշմանդամներ՝ տեղափոխվող թիկնաթոռ-սայլակներով, որոնք շարժման են բերվում ձեռքով	0,96

Գ.2 Շարժունակության տարբեր խմբերի մարդկանց հոսքերի երթևեկության արագության և ինտենսիվության հաշվարկային արժեքները հարկավոր է որոշել ըստ բանաձևերի.

$$V_{D_{ij}} = V_{D_{0j}} [1 - a_i \ln(D/D_{0j})], \quad D > D_{0j}, \quad (G.1)$$

$$g_{D,j} = V_{D,j} D \quad (9.2)$$

որտեղ  
 $V_{D,j}$  և  $g_{D,j}$  - հոսքում մարդկանց երթևեկության արագությունը և ուժգնությունն է  $j$ -ձևի ուղիով  $D_i$ , հոսքի խտության դեպքում,  
 $D$  - մարդկանց հոսքի խտությունն է տարահանման ուղու հատվածում, մարդ/մ<sup>2</sup>,  
 $D_{o,j}$  -  $j$ -ձևի ուղու մարդկային հոսքի խտության արժեքն է, երբ հոսքի խտությունը սկսում է ազդեցություն գործել մարդկանց երթևեկելու արագության վրա,  
 $V_{o,j}$  - արագության միջին արժեքը մարդկանց ազատ շարժման  $j$  տիպի ուղիով՝ հոսքի խտության  $D \leq D_{o,j}$  արժեքի դեպքում,  
 $a_j$  - գործակից, արտացոլող մարդկային հոսքի խտության ազդեցության աստիճանը նրա արագության վրա  $j$ -ձևի ուղիով շարժվելիս:  
 $D_{o,j}$ ,  $V_{o,j}$ ,  $a_j$  արժեքները շարժունակության տարբեր խմբերի մարդկանց հոսքերի համար /Գ.1/ և /Գ.2/ բանաձևերի համար բերված են Գ.2 աղյուսակում:

Աղյուսակ Գ.2

Շարժունակության խմբերը	Հարաչափերի նշանակությունները	Հարաչափերի արժեքը ըստ ուղու ձևի (j)				
		հորիզոնական	սանդուղք դեպի վար	սանդուղք դեպի վեր	թեքահարթակ դեպի վար	թեքահարթակ դեպի վեր
M1	$V_{o,j}$	100	100	60	115	80
	$D_{o,j}$	0,051	0,089	0,067	0,171	0,107
	$a_j$	0,295	0,400	0,305	0,399	0,399
M2	$V_{o,j}$	30	30	20	45	25
	$D_{o,j}$	0,135	0,139	0,126	0,171	0,146
	$a_j$	0,335	0,346	0,348	0,438	0,384
M3	$V_{o,j}$	70	20	25	105	55
	$D_{o,j}$	0,102	0,208	0,120	0,122	0,136
	$a_j$	0,350	0,454	0,347	0,416	0,446
M4	$V_{o,j}$	60	-	-	115	40
	$D_{o,j}$	0,135	-	-	0,146	0,150
	$a_j$	0,400	-	-	0,424	0,420

Գ.3 Ուղիների տեղամասերում բացվածքների առջև չպետք է թույլ տալ 0.5-ից ավելի խտության հոսքեր, ԲՍԽ-երի մասնակցությամբ մարդկանց երթևեկության դեպքում, բացվածքների առջև չպետք է թույլ տալ 0,5 ավելի խտության հոսքեր: Ընդ որում, բացվածքների միջով երթևեկության ուժգնության հաշվարկային առավելագույն նշանակությունները պետք է շարժունակության տարբեր խմբերի համար ընդունել հավասար M1 - 19,6 մ/րոպ, M2 - 9,7 մ/րոպ, M3 - 17,6 մ/րոպ, M4 - 16,4 մ/րոպ: